

ԵՐԵՎԱՆԻ ՄԻՒԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԱՊԱԳԱ ԲԺԻՇԿ

2012 ԹՎԱԿԱՆԻ N 3 (1260) Փետրվար

«Ապագա բժշկի» հատուկ թողարկումը ներկայացնում է

**«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարանի պետական ոչ առևտրային
կազմակերպության» խորհրդի 03.02.2012 թվականի նիստում
քննարկված հարցերը՝ ԵՊԲՀ-ի ռեկտորի ամենամյա
հաշվետվություն, ԵՊԲՀ 2011-ի եկամուտների և ծախսերի
նախահաշվի կատարողականի ներկայացում,
ԵՊԲՀ 2012-ի եկամուտների և ծախսերի նախահաշվի
քննարկում, հաշվետվություն՝ ԵՊԲՀ-ում
ՀՀ կառավարության 08.10.2009 թ.**

**«Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն
ռազմավարությունը և դրա իրականացման 2009-12 թթ.
միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»
1272-Ն որոշման և ՀՀ ԿԳ նախարարի
30.12.11 թ. 1806/ՍԲ հրամանով հաստատված
«Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների
դեմ պայքարի համալիր ծրագրի» դրույթների վերաբերյալ:**



«ԲԺՇԿԱԿԱՆՈՒՄ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐՆ ԱԿՆՅԱՅՏ ԵՆ...»



**ԵՊԲՅ
կառավարման
խորհրդին
հաշվետվություն
է ներկայացնում
Մխիթար
Չերացու անվան
պետական
բժշկական
համալսարանի
ռեկտոր,
պրոֆեսոր
Դերենիկ
Չրանտի
Դումանյանը**

Փետրվարի 3-ին տեղի ունեցավ Երևանի Մխիթար Չերացու անվան պետական բժշկական համալսարանի կառավարման խորհրդի 2012թ. անդրանիկ նիստը, որը վարեց ՀՀ կրթության և գիտության նախարար, ԵՊԲՅ կառավարման խորհրդի նախագահ Արմեն Աշոտյանը: Օրակարգում ԵՊԲՅ-ի ռեկտորի ամենամյա հաշվետվությունն էր, ԵՊԲՅ 2011թ.-ի եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարողականի, ԵՊԲՅ 2012թ.-ի եկամուտների և ծախսերի նախահաշվի քննարկում, հաշվետվություն «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր ծրագրի» դրույթներ

ի վերաբերյալ, ինչպես նաև ԵՊԲՅ խորհրդի քարտուղարի ընտրություն: Խորհրդի քարտուղար ընտրվեց Մարինա Գրիգորի Հայրապետյանը:

ԵՊԲՅ ռեկտոր, պրոֆեսոր Դերենիկ Դումանյանը կառավարման խորհրդի անդամներին ներկայացրեց 2011-ից համալսարանում իրականացվող բարեփոխումները թե՛ կրթական, թե՛ կառուցվածքային, թե՛ ֆինանսատնտեսական և թե՛ բուժական ոլորտներում նշելով, որ 2011-ին կառուցվածքային բարեփոխումների արդյունքում կատարվել են մի շարք վերակազմավորումներ: Մինչ այժմ գործող ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիական, դեղագիտական, ռազմաբժշկական ֆակուլտետներին

ավելացել են հանրային առողջության, հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետները: Ռուսերեն և անգլերեն լեզուներով օտարերկրացիների ուսուցման բաժինների վերակազմավորումը հանգեցրել է օտարերկրացիների ուսուցման ղեկամատի կազմավորմանը:

Տարանջատվել են թե՛ բակալավրիատի և մագիստրատուրայի, թե՛ նախադիպլոմային և հետբուհական կլինիկական ամբիոնները:

Համալսարանում ստեղծվել է կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոն՝ իր ենթաբաժիններով: Մշակվել է կենտրոնի ռազմավարությունը, ձևավորվել են կենտրոնական և ֆակուլտետային հանձնաժողովներ:

Կենտրոնական մեթոդական հանձնաժողովի նոր կազմը կանոնակարգային մի շարք փաստաթղթեր է մշակել ուղղված կրթական գործընթացի բարելավմանը:

Բանախոսը կարևորեց, որ երկարատև ընդմի-

ջումից հետո բուհի գիտական խորհուրդը կրկին կազմակերպում է ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի ընտրություններ:

Համաձայն 2011թ.-ի օգոստոսի 18-ի ՀՀ կառավարության որոշման ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Խ. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի կրթական բաղադրիչը միավորվել է ԵՊԲՅ-ին: Համալսարանում ստեղծվել են հետբուհական և շարունակական կրթություն իրականացնող 30 ամբիոններ, որոնք տեղակայված են Երևանի բոլոր առաջատար կլինիկաներում և ԵՊԲՅ-ի հիվանդանոցային համալիրներում: Արդյունքում նաև զգալիորեն հզորացել է բուհի գիտական ներուժը՝ ի դեմս գիտակլինիկական ուղղությունների ներկայացնող մասնագետների: Այդ փաստը չի կարող չանդրադառնալ գիտական աշխատանքների կազմակերպման և կառավարման վրա:

Այսօր համալսարանում աշխատում է գիտությունների 171 դոկտոր, 504 թեկնածու, 180 գիտական աստիճանի հայցողները ապագայում կհամալրեն նրանց շարքերը:

Համալսարանը շարունակում է իր գործունեությունը օտարերկրյա պետությունների համար բժիշկ մասնագետներ պատրաստելու բնագավառում:

ԵՊԲՅ-ում ներկայումս սովորող 6365 ուսանողներից 1135-ը օտարերկրյա քաղաքացիներ են: Միայն 2011-2012 ուսումնական տարում տարբեր երկրներից համալսարան են ընդունվել 515 օտարերկրյա քաղաքացիներ:

ԵՊԲՅ-ն անդամակցում է միջազգային մի շարք հեղինակավոր կառույցների, ինչպես նաև ներգրավված է եվրոպական և միջազգային կրթական ու գիտական մի շարք ծրագրերում:

Ռեկտորն անդրադարձ կատարեց նաև համալսարանական բազային կլինիկաներում՝ «Չերացի» թիվ 1 և «Սուրացան» հիվանդանոցային համալիրներում իրականացվող բարեփոխումներին, որոնք հանգեցրել են բուժօժանդությունների համակարգմանն ու որակի բարձրացմանը:

Հաջողություններն ակնհայտ են նաև ֆինանսատնտեսական ոլորտում: 2011-ին ԵՊԲՅ ՊՈԱԿ-ի ֆինանսական մուտքերը կազմել է 8 մլրդ 374.8 մլն դրամ՝ 2010-ի 6 մլրդ 775.0 մլն դրամի դիմաց: Այսինքն՝ 2010-ի համեմատ հաշվետու ժամանակահատվածում ավելի է մուտքագրվել մոտ 1 մլրդ 600 մլն դրամ:

2011 ֆինանսական տարում տնտեսվել է 1 միլիարդ դրամից ավելի գումար: Այդ գումարներն ուղղվել են նախկին վարկային միջոցները հաստատված ժամանակացույցերից ավելի արագ մա-

րելուն և այդպիսով տոկոսադրույքները խնայելուն: ՏՆ-տեսունն արդյունք է այս ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության և ամենօրյա հետևողական աշխատանքի:

ԵՊԲԶ ռեկտոր Դերենիկ Դումանյանը ներկայացրեց նաև ԵՊԲԶ 2012թ.-ի եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

Այնուհետև ելույթ ունեցան կառավարման խորհրդի անդամներ՝ ԶԶ սփյուռքի նախարար Զրանուշ Զակոբյանը, «Աբ. Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի տնօրեն Արա Մինասյանը: Կառավարման խորհրդի նիստն ամփոփեց ԶԶ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ում խոսքը ներկայացնում ենք հաջորդիվ:

Obviously successful reforms at the Medical University

University Governing Board held its first session on the 3rd of February, 2012, which was chaired by Mr. Armen Ashotyan – RA Minister of Education and Science, Chairman of the Medical University Governing Board. Session agenda covered major issues going as follows: the annual report of the University Rector; estimation of the University income and expenditure for the year of 2011 and incoming expenditures for the period of 2012 – all these were summarised and discussed. An outline of the programme combating corruption in the education system was provided and the election of the University Governing Board Secretary was held.

The University Rector Prof. Derenik Dumanyan presented a thorough report to the Board Members on reforms having taken place within the university educational, structural, financial and medical sectors since 2011. A brief summary of the aforementioned vigorous reforms follows in the next lines.

Within the framework of these structural changes throughout 2011 the Faculty of Public Health and the Faculty of Postgraduate and Continuing Education have been structured within the university; meanwhile, a Dean's Office for International Students' Education has been formed in the result of merging the Departments of Russian Speaking and English Speaking Students' Education.

The University academic departments have been separated both in Undergraduate Studies and Postgraduate Education.

Centre for Education Quality Assessment and Assurance has been established with respective subdivisions; the Centre action policy guidelines have been developed; central and faculty commissions have been formed.

A series of regulatory documents aiming at the improvement of the education process have been compiled by the new staff of the University Central Methodical Commission.

The Rector also highlighted that the University Scientific Council had resumed its activities in organizing the election of departmental professorial faculty after a long interval.

In accordance with the decree issued by the RA Government on 18th of August, 2011, the educational platform of the National Institute of Health after RA Academician S. Kh. Avdalbekyan was integrated into the medical universi-

ty education infrastructure; 30 academic departments enrolled in undergraduate and postgraduate education located in the leading clinics of Yerevan and University hospitals have been created. In the result of these key reforms profoundly powerful medical, academic and scientific potential has been concentrated at the medical university.

Currently, over 171 people holding Dr.Sc. degree and 504 PhD degree holders constitute the university faculty; 180 researchers will be enrolled in the university teaching, scientific and clinical activities in the near future.

Putting high quality education at the forefront, the University carries out its mission in educating and training qualified physicians and healthcare specialists for foreign countries. Hence, 1135 students out of 6365 studying at the University are from different countries of the world. Meanwhile, 515 international students have been enrolled in the university studies in 2011-2012.

The University has also established close cooperation framework with medical schools and healthcare institutions on an international scope in the areas of medical education and healthcare and has a membership in a number of highly-reputed organizations across the world. The Medical University is also included in various European and international educational and scientific programs.

The University Rector drew attention to the currently ongoing reforms at the university clinics; namely those taking place at "Heratsi" and "Muratsan" hospitals resulting in the improvement and systematization of the medical service.

The University has registered successful final outcome in the financial sector as well. Thus, "Yerevan State Medical University" SNCO income in 2011 constitutes AMD 8.374.8 Billion, compared to AMD 6.775.0 Billion in 2010. Within a reporting year AMD 1.600 Billion has been registered as an income compared to that of 2010; these amounts have been directed to the settlement of the previous outstanding loans before the defined schedule so that to maintain rate savings – this is one of the best illustrations of the effective action strategies against corruption and everyday scrupulous work.

The University Rector Prof. Derenik Dumanyan presented the preliminary schedule of the incomes and expenditures of 2012.

ԵՊԲՅ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅ, ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆԻ ԱՄՓՈՓԻՉ ԵԼՈՒՅԹԸ

- Աննախադեպ ցուցանիշ Հայաստանի բուհական համակարգում:
- Բուհը արձանագրում է Հայաստանի պատմության մեջ բուհական ողջ համակարգի համար երկրորդ աննախադեպ ցուցանիշը:
- Հայաստանի բուհական պատմության մեջ նման բյուջեով որևէ բուհ՝ պետական թե մասնավոր՝ չի եղել:
- Բժշկական համլսարանում կրթական գործընթացում շեշտակի և տեսանելի նվազել են կոռուպցիոն ռիսկերը:
- Բժշկական համլսարանը միջազգային հավատարմագրում անցնելու հավակնություններ է դրսևորում:
- Բժշկական համլսարանը ՀՀ ԿԳՆ-ի կողմից ընդգրկված է 2012 թվականի պիլոտային հավատարմագրում անցնող պետական 4 բուհերի շարքում



Արմեն Աշոտյան
ՀՀ կրթության և
գիտության
նախարար

Եթե խոսենք թվերի լեզվով, ապա պետք է մի քանի ակնառու հաջողություններ կարևորենք:

Առաջինը 2010-ի համեմատ 2011-ին բժշկականի առաջին կուրսի օտարերկրացի ուսանողների թիվն աճել է, որը երեք անգամ ավելին է, քան նախկինում: Սա աննախադեպ ցուցանիշ է և վկայում է այն մասին, որ մի փոքր խնդիրներից հետո, որ մենք ունեցանք Հայաստանի բուհական համակարգում, այսօր Հայաստանի առաջատար բուհերը նորից հետաքրքիր են, մրցունակ են, գրավիչ են արտասահմանցի ուսանողների համար:

Մեր այն ցանկությունը, որ Հայաստանում ձևավորվեն տարածաշրջանային մրցունակությամբ օժտված բուհական եւ հետբուհական կրթության կենտրոններ կարծես թե իրականություն դառնալու լուրջ հիմքեր ունեն: Արտասահմանցի ուսանողների աճը բժշկական համլսարանում այս ողջությամբ վստահություն է ներշնչում, եւ որոշ միջոցառումների շնորհիվ հուսով են, որ Հայաստանում օտարերկրյա ուսանողների մասնաբաժինը շեշտակի կաճի նաև ամբողջ բուհական համակարգում:

Երկրորդը՝ ակնհայտ են ֆինանսական կառավարման հաջողությունները, որոնք նույնպես կառավարման նոր, բարձր որակի արդյունք են եւ այստեղ նույնպես բուհը արձանագրում է Հայաստանի պատմության մեջ բուհական ողջ համակարգի համար աննախադեպ ցուցանիշ: Խոսքը 2011-ի բյուջեի մասին է, որը 8 միլիարդից ավելի է եղել, անգամ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին կուրսեցիների ընդունելությունը դժվարությամբ է կատարվել՝ միջնակարգ դպրոցի շրջանավարտ չլինելու կապակցությամբ:

Հայաստանի բուհական պատմության մեջ նման բյուջեով որևէ բուհ՝ պետական թե մասնավոր՝ չի եղել: Եվ սա նույնպես բավականին մեծ ցուցանիշ է, հատկապես այն հանգամանքը ի նկատի ունենալով, որ միշտ ասում ենք՝ բուհերը պետք է գումար աշխատեն, մրցունակ լինեն նաև ծառայություններ մատուցելով ոչ միայն բուն

կրթական բնագավառում, այլև հարակից ծառայություններ մատուցելով: Ինքնընտանիքային բժշկական համալսարանը այստեղ նույնպես առաջատարներից մեկն է:

Երևանի Մխիթար Ջերացու անվան պետական բժշկական համալսարանում ակնհայտ է կոռուպցիոն ռիսկերի նվազումը: Եվ սա միայն իմ կարծիքը չէ: Բոլոր բուհերում ունենք առաջընթաց այս բնագավառում, բայց այս համալսարանում կրթական գործընթացում շեշտակի և տեսանելի նվազել են կոռուպցիոն ռիսկերը: Հուսանք՝ սա տարերային երևույթ չէ, և վստահություն պետք է հայտնեն, որ կտրուկ քայլերի ձեռնարկման այստեղ կիրառված ռազմավարությունը երկարաժամկետ է, և այս բնագավառում ևս Հայաստանի այլ բուհերի շարքում առաջատարի դիրքը ապահովված է:

Հատուկ ուզում են շեշտել մի հանգամանք և՛ բուհի միջազգայնացման մեջ բժշկական համալսարանը միջազգային հավատարմագրում անցնելու հավակնություններ է դրսևորում: Կրթության որակի ապահովման հարցը առաջնահերթ համարելով՝ նաև Հայաստանի սահմաններում եղած

հնարավորությունների մեջ լուծելով, խոսքը մասնագիտական կրթության որակի կենտրոնի գործունեության մասին է, ես կարծում եմ, որ սրան զուգահեռ բժշկականը պետք է անցնի նաև միջազգային հավատարմագրում կամ ամերիկյան որևէ ապահովագրային գործակալությունում կամ մեր տարածքում համապատասխան լիազորություններ ունեցող ֆրանսիական, գերմանական կամ որևէ այլ հավատարմագրային գործակալությունում: Սա առավելագույնս գրավիչ կդարձնի այս բուհը, հնարավորություն տալով դուրս գալ միջազգային նոր շուկաներ, քանի որ վերջինիս հնարավորությունները կան, դա ոչ միայն ավանդական Հնդկաստանը, Իրանը կամ Սիրիան է, այլև կան հետաքրքիր առաջարկներ Չինաստանից, մեծ շուկա կա Ռուսաստանում...

Այս ուղղությամբ ևս բուհը աճի մեծ հնարավորություններ ունի:

Ամփոփելով խոսքս՝ նշեն նաև, որ բժշկական համալսարանը ՀՀ ԿԳՆ-ի կողմից ընդգրկված է 2012 թվականի պիլոտային հավատարմագրում անցնող պետական 4 բուհերի շարքում:

“Let me state that the possible corruption cases in the university were obviously reduced. This is not merely my opinion; we have registered successful outcome of activities in overcoming the challenges of this issue across Armenian universities. Yet, our university has obviously succeeded in significantly reducing corruption cases. I am deeply sure we have defined long-term productive working strategies in coping with this problem and we are going to hold leading positions in providing effective solutions toward this urgent issue among other Armenian universities in the future as well.

The number of first-year university international students has significantly increased in 2011 compared to that of students in 2010. This is an outstanding indicator and best witnesses that Armenian higher education institutions have overcome specific challenges and are once again competitive and attractive to foreign countries in sense they offer a wide range of high quality education and training opportunities.

I wish to specifically emphasise that our university internationalization process tends to reflect international accreditation results which will make our university outstanding and propoganda our education on an external education market scope.

Let me also state that Medical University has been included in those four state universities undergoing pilot accreditation in 2012 by the Ministry of Education and Science of Armenia,” said Mr. Armen Ashotyan – RA Minister of Education and Science - summarising the University Governing Board Session.

Mr. Ashotyan was also confident that the successful financial outcome was the best illustration of highly effective governing policy.



Դ. Յ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի 2011-ին կատարած աշխատանքների ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական գործառույթները

Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը շարունակում է բժշկական կադրերի պատրաստումը բարձրագույն կրթության երկաստիճան՝ բակալավրիատ և մագիստրատուրա համակարգում, հետբուհական ինչպես նաև շարունակական կրթության մակարդակներում:

2011-ը համալսարանի համար հազեցած էր կառուցվածքային բարեփոխումների գործընթացով, որի արդյունքում կատարվեցին մի շարք վերակազ-

մում ընդհանուր բժշկության -2080, ստոմատոլոգիական -862, դեղագիտական - 215, ռազմաբժշկական -140, հանրային առողջության ֆակուլտետներում՝ 5, օտարերկրացիների ուսուցման դեկանատ - 935, նախապատրաստական կուրս՝ ուսանողներ՝ 45, կլինիկական օրդինատորներ՝ 1946, ինտերններ՝ 95, ասպիրանտներ՝ 36, դոկտորանտներ՝ 6:

Վերանայվեց և հրամանագրվեց ամբիոնների ցանկն ըստ ֆակուլտետների պատկանելության: Տարանջատվեցին բակալավրիատի և մագիստրատուրայի կլինիկական ամբիոնները, որոնց համար ստեղծվեցին թերապիայի և վիրաբուժության 2-ական ամբիոններ: Տարանջատվեցին նաև նախադիպլոմային և հետբուհական կլինիկական ամբիոնները:

Համալսարանի նախաձեռնությամբ և առաջարկությամբ ՀՀ Կառավարության 2007թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի՝ 1933-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»՝ 1038-Ն որոշման հավելվածի ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում կատարվեցին փոփոխություններ: Բակալավրիատում և մագիստրատուրայում շրջանավարտների մասնագիտական որակավորումները սահմանվեցին հետևյալ կերպ՝ **Բժշկագիտության բակալավր, Ստոմատոլոգիայի բակալավր, Դեղագիտության բակալավր:**

Մագիստրոսական կրթությամբ շրջանավարտների որակավորումները՝ **Բժիշկ, Բժշկության մագիստրոս (հանրային առողջության), Բժիշկ ստոմատոլոգ, Դեղագիտության մագիստրոս:**

Համալսարանում ստեղծվեց կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոն՝ իր ենթաբաժիններով և մշակվեց կենտրոնի ռազմավարությունը, կազմվեցին կենտրոնական և ֆակուլտետային հանձնաժողովներ:

Հաստատվեց կենտրոնական և ցիկլային մեթոդական հանձնաժողովների մոդ կազմը: Ցիկլային մեթոդական հանձնաժողովներում ընդգրկվեցին հետբուհական ամբիոնների պրոֆեսորադասախոսական



մավորումներ: Համալսարանում գործող ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիական, դեղագիտական, ռազմաբժշկական ֆակուլտետների շարքում ավելացան հանրային առողջության, հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետները: Ուսներեն և անգլերեն լեզուներով օտարերկրացիների ուսուցման բաժինների վերակազմավորումից ստեղծվեց օտարերկրացիների ուսուցման դեկանատ:

Արդյունքում ռազմաբժշկական ֆակուլտետի բոլոր կուրսերը, և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում ՀՀ Պաշտպանության նախարարության աջակցության շնորհիվ համալրվեցին կուրսանտներով:

ԵՊԲՀ-ում ներկայումս սովորողների թիվը 6365 է: 1-7-րդ կուրսերում (բակալավրիատում և մագիստրատուրայում) սովորում են 4237 ուսանողներ, այդ

կազմից անդամներ: Կենտրոնական մեթոդական հանձնաժողովի կողմից հաստատվեցին մի շարք կանոնակարգային փաստաթղթեր:

Հաստատվեց և կիրառման մեջ դրվեց «Դասախոսների որակավորման գնահատման հարցաթերթը»: Վերջինս հիմք ընդունվեց որակավորման հանձնաժողովի կողմից տրվող եզրակացության համար՝ իր մեջ ներառելով դասախոսի ուսումնամեթոդական, գիտական, կլինիկական, հասարակական գործունեությունը, շարունակական կրթությունը, առկայության դեպքում՝ վարչական աշխատանքները:

Ուսումնական գործընթացում ուսանողների գիտելիքների գնահատման հստակեցման նպատակով կենտրոնական մեթոդական հանձնաժողովի կողմից հաստատվեց և կիրառման մեջ դրվեց հարցումների և քննությունների գնահատման նոր ձևակերպը՝ կիրառելով գործակիցներ:

Հաստատվեց ուսանողի անձնական թերթիկի (ծև 13) նոր ձևակերպը՝ էլեկտրոնային տարբերակով: Վերանշակման և փոփոխությունների ենթարկվեցին ստուգման գրքույկները, ուսանողական տոմսերը, ուսանողների հաճախման և առաջադիմության մատյանը, որոնք կիրառման մեջ կդրվեն 2012-13 ուսումնական տարվանից:

Փոփոխությունների և վերանայման տրվեցին «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիալոգիական թերթիկները, որոնք հաստատվելուց հետո դրվեցին կիրառման:

Ուսանողների և դասախոսների շրջանում անցկացվել է գիտելիքների գնահատման տարբեր ձևերի վերաբերյալ հարցաթերթային հարցում և կազմակերպվել այդ հարցման տվյալների վերաբերյալ լսումներ:

Հաստատվել են մագիստրատուրայի առարկայական ծրագրերն ու պլանները՝ ըստ ֆակուլտետների:

Ուղղվել և միատեսակ են դարձվել քննական և ստուգարքային տեղեկագրերը՝ էլեկտրոնային տարբերակով:

Ուսումնառության տարիների ընթացքում գերազանց առաջադիմության, անբասիր վարքի և հասարակական ակտիվության համար Համալսարանի 6 ուսանողների 2011-12 ուստարում նշանակվեց անվանական կրթաթոշակ՝ Մ.Հերացու անվան -3, Ռ. Յոլյանի անվան -1, Վ. Արծրունու անվան -1, Լ.Հովհաննիսյանի անվան -1:

Ռուբեն Սևակի անվան կրթաթոշակ նշանակվեց օտարերկրացի ուսանողների ուսուցման դեկանատի 5-րդ կուրսի ուսանողին:

Կրթաթոշակներ են տրվել ուսանողներին Թուրփանջյան ընտանեկան, Ագեյան ընտանեկան, Հայաստանի երիտասարդական հիմնադրամների կողմից:

«Հայ համայնքը՝ հայ ուսանողությանը» հիմնադրամի կողմից կրթաթոշակներ տրվեցին ուսանողու-

թյան տարիների ընթացքում լավ առաջադիմություն և հասարակական ակտիվություն ցուցաբերած՝ ընդհանուր բժշկության ֆակուլտետի 3-րդ կուրսի երկու ուսանողների:

Երկարատև ընդմիջումից հետո կազմակերպվեցին և իրականացվեցին համալսարանի ինը ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի ընտրություններ և հաստատվեցին գիտական խորհրդի կողմից:

Համալսարանի միջին մասնագիտական կրթություն իրականացնող քոլեջը լուծարվեց՝ դիմորդներ չունենալու պատճառով:

Հետբուհական և շարունակական կրթություն

Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում ձևավորվեց հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետ: Համաձայն 2011թվականի օգոստոսի 18-ի ՀՀ կառավարության որոշման ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս. Խ. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի կրթական բաղադրիչը միավորվեց ԵՊԲՀ-ին: Հա-



մալսարանում ստեղծվեցին հետբուհական և շարունակական կրթություն իրականացնող 30 ամբիոններ, որոնք տեղակայված են Երևան քաղաքի բոլոր առաջատար կլինիկաներում և ԵՊԲՀ-ի հիվանդանոցային համալիրներում: ԱԱԻ և ԵՊԲՀ-ի 30 ամբիոններ միավորվեցին, որոնք այսօր իրականացնում են ինչպես նախադիպլոմային, այնպես էլ հետբուհական ուսուցում:

Ֆակուլտետի կառուցվածքը

- հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի դեկանատ,
 - հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի ուսումնական բաժին,
 - հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի կազմում գործող 30 ամբիոն,
 - հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի գիտական խորհուրդ,
 - հետբուհական և շարունակական կրթության ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհուրդ:
- Վերանայվեցին և հրամանագրվեցին կլինիկական օրդինատուրայի ուսման վարձաչափերը:

Գիտություն

2011թ. ՀՀ Կառավարության որոշման հիման վրա իրականացված ԵՊԲՀ-ի և Առողջապահության ազգային ինստիտուտի կրթական բաղադրիչի միավորման արդյունքում զգալիորեն ամրապնդվեց ԵՊԲՀ-ի գիտական ներուժը, ի դեմս գիտակլինիկա-

Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի գիտական աշխատանքների ներկա վիճակը

2011թվականին համալսարանում իրականացվել է գիտահետազոտական գործունեությունը ՀՀ պետությունից «Գիտական և գիտատեխնիկական գործունեություն, ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրով բազային ֆինանսավորմանը ներկայացված 3 գիտական ծրագրերի շրջանակներում:

Գիտական ներուժը՝ դոկտոր – 171 (միջին տարիքը՝ 59), թեկնածու – 504 (միջին տարիքը՝ 48), գիտական աստիճանի հայցող – 180:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից 2011-ին ԵՊԲՀ-ն ստացավ հավատարմագրման վկայագիր՝ համաձայն որի Գիտահետազոտական կենտրոնի շրջակա միջավայրի հիզիենայի և թունաբանության փորձարկման լաբորատորիան հավատարմագրման ոլորտի շրջանակներում կիրականացնի սննդի և կենցաղային իրերի, պարագաների փորձագիտական հետազոտություններ:

Միջազգային կապերի բնագավառ

Համալսարանը շարունակում է իր գործունեությունը օտարերկրյա պետությունների համար բժիշկ մասնագետներ պատրաստելու բնագավառում:

Ներկա պահին համալսարանում ուսանում են 1135 օտարերկրյա քաղաքացիներ: Նրանցից 935-ը 1-ից 6-րդ կուրսերի ուսանողներ են, 155-ը՝ կլինիկական օրդինատորներ, ինտերներ և ասպիրանտներ, 45-ը՝ նախապատրաստական բաժնի ունկնդիրներ: Օտարերկրյա ուսանողներից 367-ը ազգությամբ հայեր են, 668-ը՝ օտարազգիներ: Հաշվետու ժամանակաշրջանում համալսարան են ընդունվել 515 օտարերկրացի ուսանողներ, որոնցից 298-ը Հնդկաստանից են և այդ տարածաշրջանի երկրներից՝ հաշվի առնելով այդ երկրներում ԵՊԲՀ-ում բժշկական կրթություն ստանալու մեծ պահանջարկը, որը համալսարանի հանդեպ ձևավորվել է շնորհիվ նրա, որ շրջանավարտները իրենց երկրներում մեծ հաջողությամբ են հանձնում որակավորման քննությունները:

Համալսարանն ունի 600 տեղով ուսանողական հանրակացարան՝ բնակության, պարապմունքների և հանգստի համար անհրաժեշտ հարմարություններով:

Բացի ուսումնառության գործընթացից՝ օտարերկրյա սովորողների համար կազմակերպվում են նաև նրանց կացության կարգավիճակի և բժշկական ապահովագրության հետ կապված աշխատանքները:

Համալսարանը գործնական հարաբերություններ է պահպանում ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչություն-

կան ուղղություններ ներկայացնող մասնագետների: Այդ փաստը չի կարող չանդրադառնալ գիտական աշխատանքների կազմակերպման և կառավարման վրա: Գիտահետազոտական աշխատանքները, որոնք կիրականացվեն 2012թ. կրելու են ավելի շեշտված կլինիկական և առողջապահական ուղղվածություն: Ավելին, նախատեսվում է գիտահետազոտական աշխատանքների և հետբուհական, նաև շարունակական բժշկական կրթության ինտեգրացիան: Այդ նպատակով ստեղծվել է գիտական գործունեության համակարգման բաժին, որի խնդիրներն են ինչպես ներկա գիտահետազոտական աշխատանքների արդիականացումը, այնպես էլ միջազգային գիտական համագործակցությունը և դրամաշնորհային ծրագրերի հայթայթումն ու շահումը:

Այդ ուղղությամբ արվել են կոնկրետ քայլեր, որոնց արդյունքում ԵՊԲՀ-ի պաշտոնական կայքի տեղեկատվություն բաժնում ստեղծվել է նոր ենթաբաժին՝ «Դրամաշնորհներ» անվամբ, և այն ամբողջությամբ համալրվել է նոր տեղեկատվությամբ:

Հատուկ ուշադրություն է դարձվում գիտակորդինացիոն խորհրդի և փորձագիտական խորհուրդների աշխատանքներին: Նրանց կազմը համալրվում է, իսկ աշխատանքները կրելու են առավել արտահայտված փորձագիտական, վերլուծական և գիտախորհրդատվական բնույթ, ինչպես նաև իրականացվելու է գիտական աշխատանքների ընթացքի շարունակական հսկողություն: Դրան նպաստելու են նաև համալսարանական գիտական սեսիաները, կոնֆերանսները, սեմինարները, որոնք կիրականացվեն մասնագիտական ասոցիացիաների ակտիվ մասնակցությամբ:

ների հետ՝ ուսանողության հետ կապված, ինչպես նաև օտարերկրյա պետությունների կրթական և առողջապահական հաստատությունների հետ համագործակցության հարցերով:

Համալսարանն իրագործում է լայնածավալ միջազգային համագործակցություն բժշկական կրթության, մասնագիտացումների, վերապատրաստումների, գիտահետազոտական աշխատանքների, գիտական, տեղեկատվական փոխանակման և այլ ասպարեզներում՝ Եվրոպայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի Դաշնության, մի շարք այլ երկրների ուսումնական և առողջապահական հաստատությունների հետ:

Համալսարանն անդամակցում է մի շարք միջազգային հեղինակավոր կառույցների՝ «Համալսարանների միջազգային ասոցիացիա», «Բժշկական կրթության միջազգային ֆեդերացիա», «Ամերիկյան միջազգային առողջապահության պլանս», «Բժիշկ ուսանողների ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա», «Բժիշկ ուսանողների եվրոպական ասոցիացիա», «Դեղագետ ուսանողների միջազգային ֆեդերացիա», «Ստոնմատիոլոգ ուսանողների միջազգային ասոցիացիա», ինչպես նաև ներգրավված է եվրոպական և միջազգային կրթական ու գիտական մի շարք ծրագրերում՝ Տասիս-Տեմպուս, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն (USAID), Գերմանական ակադեմիական փոխանակային ծառայություն (DAAD), Համաշխարհային բանկ և այլն: Տասիս-Տեմպուսի շրջանակներում այժմ իրականացվում է 4 գրանտային ծրագիր:

Համալսարանի համագործակցության դաշտը ներկայացված է հավելվածում: Համալսարանն ունի նաև խորհրդատուների միջազգային խորհուրդ, որի կազմում ԱՄՆ-ի և Կանադայի ծանաչված հայազգի բժիշկներ են: Խորհուրդը օժանդակում է համալսարանին ծանոթանալու այդ երկրների բժշկական հաստատությունների կրթական ծրագրերին, կազմակերպում է փոխանակային մասնագիտական վերապատրաստումներ և որակավորման կատարելագործումներ, աջակցում է միջհամալսարանական կապերի ստեղծմանը:

Համալսարանական կլինիկաների գործունեություն

Համալսարանական կլինիկաներ են հանդիսանում «Հերացի» թիվ 1 և «Սուրացան» հիվանդանոցային համալիրները:

«Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրում 2011թվականի հունիս ամսվա ընթացքում կատարված տեղափոխություններից հետո գործում են 14 կլինիկաներ.

1. Վնասվածքաբանության և օրթոպեդիաի
2. Ակնաբուժական
3. Փոքր ինվազիվ անոթային վիրաբուժության

4. Ինտենսիվ թերապիայի և անեսթեզիոլոգիայի
5. Դիմածնոտային վիրաբուժության
6. Սեքսապաթոլոգիայի
7. Մանկական վիրաբուժության
8. Ընդհանուր էնդովասկուլյար նյարդավիրաբուժության
9. Ընդհանուր ինվազիվ սրտաբանության
10. Միկրովիրաբուժության և պլաստիկ վերականգնողական վիրաբուժության
11. Վիրաբուժության
12. Թերապիայի
13. Ալերգոլոգիայի և կլինիկական իմունոլոգիայի
14. Ֆիզիոթերապիայի և ռեաբիլիտացիայի:



Համալիրում գործում են ախտորոշիչ, լաբորատոր ախտորոշիչ և անհետաձգելի բուժօգնության ծառայություններ, մեկ պոլիկլինիկա, ներհիվանդանոցային դեղատուն և երկու ստոնմատիոլոգիական պոլիկլինիկա՝ թիվ 1 և թիվ 3:

Տեղափոխված բաժանմունքները վերանորոգվեցին, որտեղ նախատեսվում է կազմակերպել ուսումնական գործընթաց, ինչպես նաև տեղական նոր կլինիկաներ՝ ընդհանուր վիրաբուժության, փոքր ինվազիվ անոթային վիրաբուժության, դիմածնոտային և ՔԿԱ, ինչպես նաև ուրոլոգիայի նոր կլինիկա:

«Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի մահճակալային ֆոնդը դարձավ 176 մահճակալ:

«Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրում շահագործման է հանձնվելու նաև ժամանակակից բուժարքավորումներով հագեցված վիրահատական բաժանմունք՝ 8 վիրահատարաններով, որոնք կահավորված են նաև ուսումնական գործընթացն առավել մատչելի դարձնելու սարքավորումներով:

2011 թվականի հունիս ամսին «Հերացի» հիվանդանոցային համալիրից «Սուրացան» հիվանդանոցային համալիր տեղափոխվեցին մանկական 5 կլինիկա և ներկայումս համալիրում գործում է 13 կլինիկա, այդ թվում տեղափոխված կլինիկաները՝ մանկաբուժության թիվ 1, մանկական վիրաբուժության, մանկական և նորածնային վերակենդանացման, մանկական դիմածնոտային վիրաբուժություն

և ՔԿԱ, մանկական անեսթեզիոլոգիայի, մնասվածքաբանության և օրթոպեդիայի, էնդոկրինոլոգիայի, քիմիաթերապիայի, ֆիզիոթերապիայի, թերապիայի, թունաբանական և մանկական վերակենդանացման, սրտաբանության և ինտենսիվ թերապիայի, մանկաբուժության թիվ 2:

«Մուրացան» հիվանդանոցային համալիրում բացվեց մանկական ստոմատոլոգիական կլինիկա: Համալիրում գործում են նաև ախտորոշիչ, լաբորատոր ախտորոշիչ և անհետաձգելի բուժօգնության ծառայություններ, մեկ պոլիկլինիկա, ներհիվանդանոցային դեղատուն և երկու ստոմատոլոգիա-

մանիկան), մեր առջև խնդիր ենք դրել բարձրացնել բժշկական սպասարկման որակը՝ ծառայությունների հզորացման միջոցով:

Բարեգործական հիմունքներով համալսարանի կենտրոնական մասնաշենքում մեկ ամսից շահագործման կհանձնվի մարզադահլիճը և լողավազանը:

Ներկայումս ԵՊԲՀ-ի աշխատակիցների թիվը կազմում է 2814: Առողջապահության ազգային ինստիտուտից ԵՊԲՀ են տեղափոխվել 404-ը:

ՀՀ Կառավարության 2011թ-ի հոկտեմբերի 27-ի՝ 1548-Ն որոշմամբ համալսարանին տրվեց լիցենզիա՝ վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության համար:

Համալսարանի ուսանողական խորհրդարանի 2011թ-ի կատարած աշխատանքները մանրամասն ներկայացվում է հավելվածում:

ԵՊԲՀ-ի հակակոռուպցիոն ռազմավարությունը

- Մշակվել և մշակվում են ուսումնական գործընթացի տարբեր կարգեր և ենթակարգեր՝ հաճախունների, բողոքարկունների, քննությունների կազմակերպման և այլնի վերաբերյալ:
- Վերանայվել և փոփոխվել է զնահատման համակարգը: 2011-12 ուստարվանից կիրառվում են զնահատման 0,1 և 0,2 գործակիցները, որի արդյունքում ստացվում են ոչ թե «սանդղակային-մոտավոր»՝ այլ «իրական» զնահատականներ:
- Համալսարանի ինտերնետային կայքում ապահովվել է ամբիոնների մասին (ուսումնական գործընթացին վերաբերող) լիարժեք տեղեկատվությունը:
- Համալսարանի ղեկավարության հետ էլեկտրոնային տարբերակով ուղիղ կապ է հաստատվել ուսանողության հետ, որն ապահովում է գործընթացում հետադարձ կապի սկզբունքի իրագործումը:
- Ուսանողները ներգրավվել են համալսարանի կառավարման և ուսումնական գործընթացներում (օրինակ՝ ուսանողների որոշակի խումբ մասնակցում է քննությունների կազմակերպման և վիճարկման գործընթացներին, կարևոր հարցերի շուրջ լսումներին և այլն):
- Նախաձեռնվել և արդեն ընթացքի մեջ է հզոր հակակոռուպցիոն գործիքի՝ «էլեկտրոնային համալսարանի» առանձին բաղադրիչների (օրինակ էլեկտրոնային գրադարան և այլն) ստեղծման գործընթացը:
- Սկսվել և ավարտին է մոտենում ուսանողների համար նախատեսված ուղեցույցի ստեղծումը:



կան պոլիկլինիկա՝ թիվ 2 և թիվ 4: Արդյունքում «Մուրացան» հիվանդանոցային համալիրի մահճակալային ֆոնդը 112 մահճակալից ավելացավ և դարձավ 201: Վերոհիշյալ բաժանմունքների տեղափոխությունից հետո «Մուրացան» հիվանդանոցային համալիրը վերածվեց հանրապետությունում մանկական ուղղվածություն ունեցող առաջատար բժշկական կենտրոններից մեկի:

«Մուրացան» հիվանդանոցային համալիրում կենտրոնացվեց և ստեղծվեց ախտորոշիչ կենտրոն, որում մասնավորապես ավելացան մամոգրաֆիայի, դենսիտոմետրիայի և այլ հետազոտություններ իրականացնող ծառայություններ: Վերազինվեց և վերաբացվեց պաթոլոգիա-անատոմիական ծառայությունը՝ իր դիախերձարանով:

Տեղափոխությունից հետո վճարումները և պետական պատվերի և վճարովի ծառայություններում էականորեն ավելացել են:

«Հերացի» թիվ 1 և «Մուրացան» հիվանդանոցային համալիրների բոլոր կլինիկաները համալսարանական ամբիոնների բազաներն են, ուստի դրանցում իրականացվում է նախադիպլոմային, հետբուհական և շարունակական կրթության ուսումնական գործընթաց:

Հաշվի առնելով, որ համալսարանական կլինիկաներն ու ծառայություններն արդեն իսկ ճանաչված են և ունեն հաճախունների կայուն թիվ (այդ է վկայում այցելած հիվանդների թվի տարեկան դի-

ԵՊԲՀ կրթության և գիտության ոլորտներում

2011 թ-ի փաստացի ֆինանսական հոսքերի վերաբերյալ (աղյուսակ 1)

ՍՈՒՏՔԵՐ

2011թ-ի ԵՊԲՀ տարեկան բյուջեի կրթության և գիտության պետպատվերի գծով պլանավորվել է 749.0 մլն. դրամ, փաստացի կատարված աշխատանքների ծավալը կազմել է 808.0 մլն.դրամ, որն ավելի է պլանավորվածից 59.0 մլն. դր. կամ 7.9%:

Վճարովի ուսուցման գծով պլանավորվել էր հավաքագրել 2900.0 մլն դրամ, փաստացի կատարված աշխատանքները կազմել են 3687.8 մլն. դր., որն ավելի է պլանավորվածից 787.8 մլն. դր. կամ 27.2%-ով: Սա այն դեպքում, երբ տեղացի ուսանողների առաջին կուրսի ընդունելություն գրեթե չի եղել, դրա փոխարեն շարքերը համալրվել են օտարերկրացի ուսանողներով՝ ընդհանուրը՝ 515 հոգի (2010-ի 170 հոգու փոխարեն): Ընդ որում՝ առաջին կուրսի ուսանողներ՝ 367 հոգի, նախապատրաստական բաժին՝ 46 հոգի, կլինիկական օրդինատուրա՝ 72 հոգի, ինտերնատուրա՝ 30 հոգի:

Ընդամենը ուսուցման վճարովի և պետպատվերի, գիտության և այլ մուտքերը միասին պլանավորվել է 4599.0 մլն. դրամ, փաստացի կատարվել է պլանավորվածից 937.8 մլն. դրամ ավելի՝ կազմելով 5536.8 մլն դրամ, փաստացի կատարողականը կազմել է 120.4%: Ընդ որում, 2011 թվականի ընթացքում զեղչվել է մոտ 1200 ուսանողի ուսման վարձը՝ ընդհանուր 268.0 մլն. դրամի չափով, որը կազմում է ուսանողների ընդհանուր համակազմի 25 %-ը՝ սահմանված 10% -ի փոխարեն:

Այսպիսով, 2011 թ-ի կրթության և գիտության ոլորտներում ֆինանսական մուտքերի՝ 5536.8 մլն. դրամ գումարի 14.6 %-ը ստացվել է պետ.բյուջեից, իսկ 85.4% -ը՝ վճարովի մուտքերից:

ԵԼՔԵՐ

Աշխատավարձ և սոց.վճար

Աշխատավարձի և սոց.վճարի հոդվածը պլանավորվել է 2550.0 մլն դրամ, փաստացի վճարվել է 2420.0 մլն. դրամ, որն էլ պլանավորվածի համեմատ կազմում է 95.0% (տնտեսում՝ 130.0 մլն.դրամ):

Ամբիոնի վարիչի միջին աշխատավարձը կազմում է 220.0 հազար դրամ:

Դասախոսական անձնակազմի միջին աշխատավարձը կազմում է 165.0 հազար դրամ:

